ԲԱԺԻՆ 6. ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 6: ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ПЕДАГОГИЧЕСКОЙ МЫСЛИ
SECTION 6: HISTORY OF ARMENIAN PEDAGOGICAL THOUGHT

DOI: 10.46991/educ-21st-century.v4.i2.217 **https://orcid.org/0000-0002-6224-4938**

THE FEATURES OF RELIGIOUS EDUCATION IN IN THE WORKS OF KAREKIN I CATOLICOS

Baghdasaryan Victoria
PhD student of Yerevan State University, Armenia
victorya.baghdasaryan@ysu.am

Summary

In the comprehensive process of human formation, religion and moral principles and spiritual values related to it have their unique importance.

Religious education and upbringing are one of the most important elements of the educational system.

It should be noted that in the works related to the history of Armenian pedagogy, religious or moral education and upbringing partially addressed but they didn't separate the two but presented them in a unified context.

The problems of religious education have always been in the His Holiness' attention. This is the reason why throughout his spiritual activity, Karekin I initiated and implemented number of programs, which were the basis for the formation of the spiritual and moral value system of the young generation.

In his works His Holiness the Patriarch presents his vision of the educational policy of effective organization of religious education.

During his enthronement in Holy Etchmiadzin, Catholicos Karekin I managed to transform the educational system for training future clergymen, founded centres of spiritual education and gave impetus to the activity of spiritual seminaries for the benefit of future generations.

***Keywords**: religious education, moral value system, development process, personality formation, spiritual upbringing.*

ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОГО ВОСПИТАНИЯ В РАБОТАХ КАТОЛИКОСА ГАРЕГИНА ПЕРВОГО

Багдасарян Виктория
Соискатель
Ереванский государственный университет, Армения
victorya.baghdasaryan@ysu.am

Аннотация

В процессе разностороннего становления человека религия и связанные с ней нравственные принципы и духовные ценности имеют исключительное значение. Религиозное образование и воспитание являются важнейшими частями образовательной системы. Стоит отметить, что в связанных с историей армянской педагогики работах частично обращались к религиозному или нравственному образованию, не разделяя их, а представляя в едином контексте. Проблемы религиозного воспитания всегда были в центре внимания Патриарха. Поэтому на протяжении всей его религиозно-педагогической деятельности католикос Гарегин Первый предпринимал и осуществлял ряд программ, которые стали основой для формирования религиозных нравственных ценностей молодого поколения. Патриарх в своих работах представлял свое видение образовательно-воспитательной политики результативной организации религиозного воспитания. Во время правления в Святом Эчмиадзине католикос Гарегин Первый успел поменять систему подготовки будущих священнослужителей, открыл центры духовного воспитания, стимулировал деятельность духовных семинарий для пользы будущих поколений.

***Ключевые слова**: религиозное воспитание, система нравственных ценностей, процесс развития, формирование личности, духовное воспитание.*

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բաղդասարյան Վիկտորիա
հայցորդ,

Երևանի պետական համալսարան, Հայաստան
victorya.baghdasaryan@ysu.am

«Աշխարհի ոչ մի կրոն մարդ անհատի արժէքը այնքան բարձր չի դասել, որքան քրիստոնէութիւնը»:
Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոս

Համառոտ ներածություն: Մարդու ձևավորման բազմակողմանի գործընթացում կրոնը և դրան առնչակից բարոյական սկզբունքներն ու հոգևոր արժեքներն իրենց բացառիկ նշանակությունն ունեն: Կրոնական կրթությունն ու դաստիարակությունը կրթական կամակարգի կարևորագույն տարրերից են: Հարկ է նշել, որ հայ մանկավարժության պատմությանն առնչվող աշխատությունների շատ հեղինակներ, իրենց աշխատություններում մասնակիորեն անդրադարձել են կրոնական կամ բարոյական կրթությանն ու դաստիարակությանը, սակայն չեն տարանջատել այդ երկուսը, այլ ներկայացրել են միասնական համատեքստում:

Կրոնական դաստիարակության խնդիրները մշտապես եղել են Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում: Սա է պատճառը, որ իր հոգևոր-մանկավարժական ողջ գործունեության ընթացքում Գարեգին Առաջին կաթողիկոսը նախաձեռնել ու իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք հիմք են հանդիսացել մատաղ սերնդի հոգևոր ու բարոյական արժեհամակարգի ձևավորման համար:

Բանալի բառեր: *Կրոնական կրթություն, բարոյական արժեհամակարգ, զարգացման գործընթաց, անձի ձևավորում, հոգևոր դաստիարակություն:*

Հիմնախնդիրը: Ուսումնասիրության հիմնախնդիրը Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի աշխատությունների ու քարոզների հիման վրա աստվածաբանության ու մանկավարժության համատեքստում կրոնական կրթության և դաստիարակության դերի ու նշանակության վերհանումն ու արժևորումն է:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրի վերաբերյալ կան տարբեր ժամանակաշրջանի օտարազգի և հայ մանկավարժների ու հոգեբանների ուսումնասիրություններ, որոնցում անդրադարձ է կատարվել հիմնահարցին տարբեր տեսակետներով ու վերլուծական մոտեցումներով: Նրանց թվում են Շահան Պերպերյանը, Լիդա Թորգոմյանը, Արթուր Շոպենհաուերը, Անրի Բերգսոնը, Կարլ Ռոջերսը, Էրիխ Ֆրոմմը, Նիկոլայ Նիկանդրովը:

Հոդվածի նպատակը: Սույն հոդվածում հետազոտության նպատակն է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի աշխատությունների ու քարոզների հիման վրա ներկայացնել կրոնական կրթության և դաստիարակության դերն ու նշանակությունը, դիտարկել կրոնական դաստիարակությունը աստվածաբանության ու մանկավարժության համատեքստում:

Հետազոտության նորույթն այն է, որ առաջին անգամ են ներկայացվում կրոնական դաստիարակության առանձնահատկությունները Գարեգին Վեհափառի աշխատություններում ու քարոզներում:

Հիմնական նյութի շարադրանք: Վեհափառ Հայրապետը տալիս է մարդու՝ իր յուրօրինակ սահմանումը՝ կարևորելով նյութական, իմացական ու հոգեկան տարրերի ներդաշնակության անհրաժեշտությունը. «Մարդը որպէս նիւթեղէն, իմացական ու հոգեկան տարրերու ներդաշնակութիւն՝ իր ամբողջականութիւնը կը գտնէ այս երեք երեւոյթներուն՝ նիւթականին, իմացականին եւ հոգեկանին գեղեցիկ եւ վայել ընդելուզումովը իր կեանքին մէջ: Մարդը ասոնցմէ մէկով կամ երկուքով ամբողջ չէ: Մէկ է, լրիւ, ճշմարիտ, վաւերական մարդ՝ այս երեքին միացեալ եւ ներդաշնակեալ ամբողջութեամբ» [2, 17]: Այս համատեքստում է, որ կրոնական դաստիարակությունը՝ որպես հոգևոր ու բարոյական արժեքներ ձևավորող կարևորագույն բաղադրիչ, անհրաժեշտ է ներառել անձի ձևավորման գործընթացում: Կրոնը մշակույթի անհրաժեշտ տարր է, որը մարդու անձնական ու հասարակական կյանքում մեծ նշանակություն ունի: Քրիստոնեական կրոնի մեջ ճանաչված գերագույն երեք առաքինություններն են հավատը, հույսն ու սերը:

«Հաւատքը արժէք ունի, երբ մեր կեանքում կը ներգործի: Հաւատքը տեսութիւն չէ, գաղափար չէ, զարդ ու յարդարանք չէ, պարագայական խօսք չէ, չորացած, ձեւականացած աւանդութիւն չէ: Կեա՛նք է, ապրու՛մ:

Եւ հէնց այս իսկ պատճառով նրա զօրութիւնը ճիշտ կը հասկացուի, երբ նա ներկա լինի մեր կեանքի մէջ, երբ մեր ապրումները նրանով գունաւորուած եւ զսպանակուած լինեն» [3, 52]։

Հետաքրքրությունը կրոնական կրթության ու դաստիարակության հանդեպ միանգամայն օրինաչափ է. ժամանակակից հասարակության առջև ծառացած խնդիրների մեծ մասը՝ ավանդական հասարակությունների ոչնչացում կամ փոխակերպում և դրա հետ կապված սերունդների միջև կապերի խախտում, ազգային արժեհամակարգի վերաձևավորում, շահերի բախում, սոցիալական ու բարոյապես նշանակալի ոլորտներից դեպի ժամանցի ոլորտ անցում, որը հաճախ ունի ապասոցիալական ուղղվածություն, սպառման պաշտամունք, ազգային արժանապատվության անկում, պայմանավորված է դաստիարակության գործընթացում որոշակի բացթողումներով կամ ոչ պատշաճ մոտեցմամբ։ Հենց սա է ժամանակակից հասարակության ճգնաժամի ամենավառ դրսևորումներից մեկը։ Դրա հետ մեկտեղ հասարակության մեջ աճում է այն հսկայական դերի ըմբռնումը, որը կարող է և պետք է դաստիարակությունը խաղա անգործության և անտարբերության բազմաթիվ դրսևորումների կանխարգելման ու հաղթահարման գործում։ Դա է կրոնական դաստիարակությունը դարձնում այդքան կարևոր մանկավարժական գիտության ու պրակտիկայի և ընդհանրապես հասարակության համար։

Ինչպես իրավացիորեն նշել է Գարեգին Առաջին կաթողիկոսը, բնության օրենքը թույլ չի տա որևէ դատարկություն։ Երբ որևէ պատճառով դատարկություն է ստեղծվում, այն անմիջապես լցվում է մի բանով։ Մարդկային կյանքում ևս դատարկությունը տեղ չունի, քանի որ այն օգտագործվում է օտար կրոնական կամ փիլիսոփայական աշխարհայացքներ տարածող տարրերի կողմից։ «Հարկ ի վերայ մեր կայ», որ մե՛նք լցնենք այդ բացը մեր քրիստոնէական հաւատի, Աւետարանի ճիշտ հասկացուած ճշմարտութիւնների եւ մեր սուրբ հայրերի ըմբռնումներ տարրերով, որպէսզի նախ հարազատ մնանք մեր ինքնութեանը, նախանձախնդիր՝ մեր արժանապատուութեանը եւ պատասխանատու՝ մեր երեխաների, գալոց սերնդների առողջ կազմաւորմանը» [3, 13]։

Հասարակական մի շարք երևույթների շարքում կրոնն ու հավատը՝ որպես հասարակական գիտակցության ձև, կարևոր տեղ են զբաղեցնում անձի աշխարհընկալման, հասարակության մեջ բարոյական նորմերի հաստատման, կյանքի իմաստի ու նպատակների վերլուծություններում։

Լ. Թորգոմյանն իրավամբ նկատել է, որ այսօր կրոնական դաստիարակության մեջ «իրեն զգացնել է տալիս գիտական լուրջ հիմնավորումից զուրկ ինքնագործունեությունը, տնավարությունը։ Բնականաբար, տասնամյակներ շարունակ թե՛ մարդկանց հոգիներում, թե՛ մանկավարժագիտական գրականության մեջ կրոնաբարոյական արժեքները չեն իմաստավորվել, չեն դարձել ուսումնասիրության առարկա, արժեքներ, որոնց դաստիարակչական հնարավորությունները դժվար չէ գերագնահատել։

Կրոնի դաստիարակչական առաքելության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն անձի ներաշխարհի վրա ներգործելու մի ամբողջ համակարգ է՝ սոցիալ-պատմական ու էթնոհոգեբանական արմատներով» [4, 90 և 135]։

Վեհափառ Հայրապետն այս առումով իր դիտարկումն ունի, ըստ որի՝ «թէ՛ բնատուր տաղանդը, ընդոծին կարողութիւնը, թէ՛ միջավայրն ու մթնոլորտը եւ թէ՛ կազմակերպեալ կրթա-դաստիարակչական քաղաքականութիւնը եւ անոր հետեւող գործունեութիւնը ունին իրենց բաժինը այն ընդհանուր առաքելութեան մէջ, որ մարդու ինքնակազմաւորման շարունակական ընթացքն է եւ որմէ կախում ունին մարդկային քաղաքակրթութեան որակն ու տարողութիւնը» [1, 117]։

1978 թ. հունիսի 13-17-ը Գարեգին Վեհափառը՝ որպես Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության աթոռակից կաթողիկոս, Ն.U.O.S.S. Խորէն Ա. Կաթողիկոսի հետ միասին մեկ տարի աշխատելուց հետո նախագահում է Կաթողիկոսության ազգային ընդհանուր ժողովը, որի օրակարգի մասնավոր նյութը կրոնական դաստիարակության հարցն էր՝ պայմանավորված խնդրի կենսական ու պահանջված կարևորությամբ։

«Հայ Ազգային Վարժարաններու ուսուցման ընթացքին մէջ կրօնական դաստիարակութեան լուրջ ներառման, Կիրակնօրեայ Դպրոցներու, կրօնական ուսման եւ դաստիարակութեան յատուկ դասագիրքերու եւ այլ, ժողովրդական, հրատարակութիւններու անհրաժեշտութեան հետ միասին մասնաւոր շեշտ դրուեցաւ հոգեւորականներու պատրաստութեան, յատկապէս Քահանայից Դասի (ամուսնացեալ հոգեւորականութեան) ուժեղացման անյետաձգելի գործին վրայ» [1, 130]։

Այս առումով անասելի մեծ է Վեհափառ Հայրապետի վաստակը, քանի որ վերջինս նախաձեռնել ու հսկայածավալ աշխատանք է կատարել հենց հոգևորականների նոր սերնդի պատրաստման ուղղությամբ։ «Ձեռնարկ հովուական աստուածաբանութեան» գրքույկն արժեքավոր ուղեցույց է հայ հոգևորականի,

հատկապես նոր հոգևորական ծառայության համար պատրաստվող երիտասարդների համար։ Այստեղ բնութագրվել են հոգևորականի անձի պատրաստության ու գործունեության հիմնական սկզբունքները և ավետարանական ու հայ եկեղեցական ավանդական տվյալները՝ ուղղված հոգևորականության կամ կրոնական դաստիարակության ասպարեզում պատրաստվող ուսանողներին։ «Դպրոցը որպէս մարդու պատրաստութեան, կազմաւորման գլխաւորագոյն հաստատութիւն՝ առանձնայատուկ տեղ պէտք է ունենայ հոգեւոր հովիւին կեանքին եւ գործունէութեան մէջ։ Դարերու աւանդութեամբ նուիրագործուած իրողութիւն մըն է, որ Հայ Դպրոցը անբաժան եղած է Հայաստանեայց Եկեղեցիէն։ Պատմական պրպտումներու եւ վերլուծումներու կարիք չկայ՝ հաստատելու թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցէն ծնաւ Հայ Դպրոցը եւ անոր առաջին ուսուցիչները եղան Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասաւորները վարդապետ (=ուսուցիչ) բառով նկարագրուած [2, 75]։

Ըստ Վեհափառի՝ հոգևոր հովվի պարտքն է սերտ կապ ստեղծել դպրոցի հետ։ «Ով կուզէր հայ ազգը հարուածել առաջին զարկը կը հասցնէր եկեղեցիին։ Ով կ՚ուզէր հայ դպրոցը խորտակել, հայ ինքնութեան բերդը քանդել, հայ եկեղեցին կ՚ընտրէր որպէս առաջին թիրախ» [1, 121]։

Կարևորելով կրոնական կրթությունն ու դաստիարակությունն անձի ձևավորման ու զարգացման գործընթացում՝ Վեհափառ Հայրապետը երկու հիմնական գործոն է շեշտադրում, որոնք ամենաազդեցիկն են մարդու կազմավորման վրա։ Դրանք են՝

1. տաղանդը, ձիրքը, աստուածատուր կարողութիւնը,

2. աշխատանքը, ծրագրեալ, դասաւորեալ ընթացքը այն գործունէութեան, որուն նպատակն է դաստիարակութիւնը կամ կրթութիւնը անհատին [1, 118]։

Գալով քրիստոնեությանը՝ Վեհափառը նշում է, որ Քրիստոսն ինքն իրեն բաբբի կամ ուսուցիչ անվանեց, քարոզիչ կոչեց, և հատկանշական է, որ իր գործունեության գերակշիռ հատվածը հենց դաստիարակչական էր՝ հիմնված երկու հիմնական մեթոդի վրա։

«ա) Իրեն հետեւողներու նեղ շրջանակին, յատկապէս Իր կողմէ ընտրուած 12 հոգանոց Առաքեալներու խումբին եւ Իր գաղափարներուն համակիր եւ Իր անձին համամիտ անձերու, աշակերտներու, քիչ մ՚աւելի լայն շրջանակի մը մէջ, որ ծանոթ է 72-ներու խումբը անունի տակ։ Այս մասնաւոր պարագային դաստիարակութեան մեթոտը էականօրէն կը փոխուէր։ Նախ կ՚ապրէր իր առաքեալներուն հետ միասին, առտնին կենցաղակերպով, միասին ուտելով, աղօթելով, շրջագայելով եւ գործեր կատարելով։ Այս բոլորը կ՚ընէր ոչ թէ տեսական, գիտական, ակադեմիական ուսուցման եղանակներով, այլ անձնական, մտերմական խօսակցութիւններով, յաճախ պատասխանելով անոնց հարցումներուն։ Կեանքի, ապրուած կեանքի պարունակին մէջ կը ներկայացնէր ճշմարտութիւնները եւ ո՛չ թէ տեսաբանական (theoretical) վերլուծումներով փիլիսոփաներու նման։

բ) Հրապարակային քարոզութիւններով բլուրներու վրայ, ինչպէս «Փոքր Աւետարան» կոչուած լերան քարոզը, կամ ծովափին, կամ նաւուն վրայէն եւ կամ տաճարի մուտքի, գաւիթի սրահներուն մէջ եւ կամ քաղաքէ քաղաք ու գիւղէ գիւղ ճանապարհորդութեանց ընթացքին։ Այս ուսումները ժողովրդական բնոյթ ունէին, այսինքն՝ առարկային մեթոտաբանութեամբ կը տրուէին, մարդկային կեանքի կացութեան մէջէն քաղուած դրուագներով կը բացատրուէին։ Այդ իմաստով ըսուած է որ Աւետարանի լեզուն պատումի ամենէն պարզ, ինքնաբուխ եւ հաղորդական լեզուն է, որուն մէջ գրական արուեստի միջամտութիւնը իր նուազագոյն աստիճանի վրայ կը գտնուի։ Ժողովուրդի ոչ թէ իմացական, գիտական զարգացումն էր իր նպատակը, այլ կեանքի իմաստին ուղիղ ըմբռնումը, մարդկութեան երջանկութեան համար անոր աղբիւր ըլլալու իրողութիւնը։ Կեանքը սիրոյ ծնունդն է, Աստուծոյ սիրոյ բխումը տիեզերքի մէջ։ Երբ աստուածատիպ նկարագիրը պահուի հարազատ եւ առողջ եւ նպատակը չշեղի երջանկութեան ուղղուած ըլլալու իր ուղղութենէն՝ այն ատեն է որ մարդը կը գտնէ իր փրկութիւնը իր ինքնութեան հարազատ պահպանումն ու զարգացումը, Աստուծոյ պատկերին իր համապատասխանութեան բիւրեղեայ զտութիւնը» [1, 118]։

Կրոնական դաստիարակության խնդիրները մշտապես եղել են Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում։ Սա է պատճառը, որ իր հոգևոր-մանկավարժական ողջ գործունեության ընթացքում Գարեգին Առաջին կաթողիկոսը նախաձեռնել ու իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք հիմք են հանդիսացել մատաղ սերնդի հոգևոր ու բարոյական արժեհամակարգի ձևավորման համար։

«Դաստիարակութիւնը ոչ թէ ապրուստ ճարելու միջոցի մը ձեռքբերումն է, այլ անկէ անդին կեանքը ապրելու այնպիսի եղանակի մը իւրացումը մարդուն կողմէ, որուն հոմանիշը երջանկութիւն է, երկընքի արքայութիւն մարդոց կեանքին մէջ։ Բնականօրէն այստեղ մասնագիտական իմաստով յատուկ

դասընթացքի հարց չի դրուիր։ Մէկը իրաւաբանութիւն կ՚ուսանի, մէկը ճարտարապետութիւն, մէկը բժշկութիւն, մէկը փիլիսոփայութիւն, մէկը պատմութիւն, եւ այլն։ Ասոնք կապուած չեն այն դաստիարակութեան հետ, որ պարզ մարդը նպատակ ունի անոր երջանկութեան ձեռքբերման էական նպատակին մէջ։ Այստեղ հարցը կեանքի արուեստի ուսուցումն է, որուն մէջ այնքան որոշադրիչ նշանակութիւն եւ դեր ունին կրթութեան եւ դաստիարակութեան էութային հարցերը, ինչպէս սովոր են հիմա մեր հայրենիքին մէջ ըսել՝ հիմնահարցերը» [1, 119]։

Վեհափառ Հայրապետն իր աշխատություններում ներկայացնում է կրոնական դաստիարակության արդյունավետ կազմակերպման կրթադաստիարակչական քաղաքականության իր տեսլականը, ըստ որի՝

1. «եկեղեցիներում, գիւղերու համայնքային սրահներում, մշակութային տուներում, դպրոցներու սրահներում եւ նոյնիսկ բացօդեայ վայրերում էջ ըստ յարմարութեան ժողովուրդը հաւաքել եւ նախապէս պատրաստուած ծրագրի հիման վրայ Քրիստոսի Աւետարանը եւ եկեղեցւոյ տօներն ու սուրբերը ներկայացնել ժողովրդական մատչելի լեզուով։ Չափահասներու կրթութիւնը (adult education) բացատրութեամբ կը նշուի քարոզչութեան այս կերպը։ Ասոր մէջ ներառել նաեւ ձայնասփիւռի եւ հեռատեսիլի տեղական մասնաճիւղերու հնարաւորութիւնները աւելի լայն զանգուածներու կարենալ հասնելու համար։

2. Դպրոցական երեխաներուն որպէս դպրոցական ընդհանուր կրթութեան մաս կազմող նիւթ ներառնել քրիստոնէական ուսմունքը, որ եղած է մղիչ ոյժը եւ կազմաւորիչ ազդակը հայ մշակոյթին։ Ես չեմ կրնար երեւակայել մէկ հայ ազգային դպրոց, որտեղ Հայց. եկեղեցիին պատմութիւնը, գրականութիւնը, ծէսը, դաւանանքը, աւանդութիւնները դուրս մնան կրթական համակարգէն... Կարեւորագոյնը այս բոլորին մէջ՝ ձեռնհաս եւ օգտաշատ ուսուցիչներու պատրաստութեան հարցն է, որուն համար լարուած, աշխատանք կը տարուի Մայր Աթոռի քրիստոնէական քարոզութեան եւ դաստիարակութեան կեդրոնին կողմէ» [1, 118]։

«3. Դպրոցական կրթութեան ուրիշ ճանապարհ մը կայ, ուր կրօնական դաստիարակութիւնը, ո՛չ մէկ դժուարութիւնը կ՚առաջացնէ.-կիրակնօրեա վարժարաններու ցանցը [1, 123]։

4. Հոգևոր գրականության տպագրությունն ու լույսընծայումը»։

Եզրակացություն: Այն կարճ ժամանակահատվածում, որ Գարեգին Առաջին կաթողիկոսը գահակալեց Սուրբ Էջմիածնում, հաստատեց վերափոխել ապագա հոգևորականներ պատրաստելու կրթական համակարգը, բացեց հոգևոր դաստիարակության կենտրոններ աշխարհիկների համար, զարկ տվեց հոգևոր ճեմարանների գործունեությանը՝ ի նպաստ ապագա սերունդների։ Եվ այն, ինչ ստացել ենք Վեհափառ հոր հոգևոր-մանկավարժական գործունեության շնորհիվ, կրոնական դաստիարակության, բարոյական բարձր ընկալումներով, կրոնական ապրումներով, բարեպաշտական խոր զգացումներով զսպանակված ժառանգությունն է, որը հնարավոր եղավ իրականացնել նրա ապրած տարիների կարելիության սահմաններում։

Օգտագործված գրականության ցանկ

1. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Կեանքը ի հաղորդութեան ընդ Աստուծոյ, Կրօնական, աստուածաբանական եւ հայագիտական երկեր, Լոնտոն, 2015:
2. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ձեռնարկ հովուական աստուածաբանության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1996:
3. Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայաստանեայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ, Ս. Էջմիածին, 1996:
4. Թորգոմյան Լ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, «Տոներ», Երևան, 2005:

Получено: 02.11.2022 *Received 02.11.2022*
Рассмотрено: 09.11.2022 *Reviewed 14.09.2022*
Принято: 15.11.2022 *Accepted 15.11.2022*
Journal ''Education in the 21st Century'', Vol1-8/2/, 2022

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License